

ԱՐՎԵՍՏԻ ԳՐԱՔՆՆՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՆԱՎՈՐՈՒՄԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ (1920–1923 ԹԹ.)

ՀԱՍՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

պատ. գիտ. թեկնածու

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ

Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիա

hamosukiasyan@gmail.com

ՀՏԴ՝ 93/94; 930.85

DOI:10.54503/1829-4278.2023.2-120

Ամփոփագիր

Բնակչության լայն զանգվածների շրջանում գաղափարաքաղաքական ու մշակութային քարոզչություն իրականացնելու և կոմունիստական գաղափարներ արմատավորելու նպատակով Խորհրդային Հայաստանի իշխանությունները 1920 թ. դեկտեմբերից ձեռնամուխ եղան հանրապետությունում քաղաքական վերահսկողության հաստատմանը: Այդ նպատակով պետականացվեցին մշակութային հաստատությունները, տպարանները, երաժշտական գործիքները և այլն: Այնուհետև իշխանությունները քայլ առ քայլ գրաքննական հսկողություն սահմանեցին արվեստի բնագավառի նկատմամբ: Այդ հարցում լուսավորության ժողկոմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչությունը համագործակցում էր ռազմական գործերի ժողկոմատի և Հայաստանի արտակարգ հանձնաժողովի (չեկա) հետ: Խորհրդային Հայաստանում արվեստի գրաքննության սկզբնավորման փուլ է համարվում 1920 թ. դեկտեմբերից (Հայաստանի խորհրդայնացումից) մինչև 1923 թ. հունիսն ընկած ժամանակահատվածը, երբ կազմակերպվեց Հայաստանի գլավլիտը: Այդ ընթացքում առավելապես հաշվառվում էին ներկայացումները, թեև նաև արգելվում էին որոշ միջոցառումներ, ինչպես նաև երբեմն հաշվի չէր առնվում գրաքննությունը:

Բանալի բառեր. գրաքննություն, կինո, թատրոն, երաժշտություն, արվեստ, քաղաքական հսկողություն, Խորհրդային Հայաստան, գլավլիտ

Բնակչության լայն զանգվածների շրջանում գաղափարաքաղաքական ու մշակութային քարոզչություն իրականացնելու և կոմունիստական գաղափարներ արմատավորելու նպատակով՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության (ՀՍԽՀ) իշխանությունները 1920 թ. դեկտեմբերից ձեռնամուխ եղան հանրապետությունում քաղաքական վերահսկողության հաստատմանը: Նշված խնդրի կենսագործմանն էին միտված կրթամշակութային հաստատությունների (թատրոն, կինոթատրոն, թանգարան, գրադարան, գրախանութ և այլն), տպարանների, մինչև իսկ երաժշտական գործիքների պետականացումը, հրատարակչական գործի կենտրոնացումը, այնուհետև քաղաքական լուսավորության կենտրոնացված համակարգի ստեղծմանն ուղղված քայլերը: Այս գործողություններին հաջորդեց գրաքննության հաստատումը: Խորհրդային Հայաստանի մշակույթի վերաբերյալ ինչպես խորհրդային տարիներին, այնպես էլ ՀՀ անկախության շրջանում հրատարակվել են մի շարք աշխատություններ¹: Դրանցում, սակայն, արվեստի գրաքննության հարցը ուսումնասիրության նյութ չի դարձել: Այն, իրավամբ, գիտականից զատ նաև հանրային հետաքրքրություն ներկայացնող խնդիր է: Ներկա անդրադարձը նվիրված է Խորհրդային Հայաստանում արվեստի գրաքննության սկզբնավորման հարցին:

¹ **Սելիքսեթյան Ս. Ա.**, *Ուրվագիծ սովետահայ թատրոնի պատմության*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1960, *Ակնարկներ հայ արվեստի պատմության 1. Ակնարկ հայ երաժշտության պատմության*, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ, 1963, **Ղազանջյան Վ. Հ.**, *Սովետահայ կուլտուրայի առաջին քայլերը*, Երևան, Հայպետհրատ, 1964, **Худавердян К. С.**, *Культурная революция в Советской Армении. 1920–1940*, Ереван, Изд. АН АрмССР, 1966, *Հայ ժողովրդի պատմություն*, հ. VII, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, էջ 421–471, *Հայ սովետական թատրոնի պատմություն. 1917–1932*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1967, **Закоян Г. В.**, *Армянское немое кино*, Ереван, Изд. АН АрмССР, 1976, **Հարությունյան Բ. Բ.**, *Հայ սովետական թատրոն. 1917–1977*, Երևան, Սովետական գրող, 1985, **Աղասյան Ա. Վ., Հակոբյան Հ. Հ., Հասարթյան Ս. Ս., Ղազարյան Վ. Հ.**, *Հայ արվեստի պատմություն*, Երևան, Զանգակ–97, 2009, *Հայոց պատմություն*, հ. IV, գիրք I, Երևան, Զանգակ–97, 2010, էջ 674–702, **Գալստյան Ս.**, *Հայացք մեր կինոյին. պատմությունը և ներկան*, Երևան, Հեղինակային հրատ., 2011, **Սիրզախանյան Ռ. Կ.**, *Կրթամշակութային կյանքը Խորհրդային Հայաստանում 1920–1932 թթ.*, Երևան, Տիգրան Սեժ, 2018 և այլն:

Կրթամշակութային հաստատությունների պետականացումը

Խորհրդայնացումից (02.12.1920 թ.) հետո Հայաստանում իրականացվող ռազմական կոմունիզմի քաղաքականությունը դրսևորվեց նաև արվեստի ոլորտում: Իբրև առաջին քայլ՝ Հայաստանի հեղկոմի 1920 թ. դեկտեմբերի 17-ի դեկրետով պետականացվեցին հանրապետության տարածքում գործող բոլոր ազգությունների հոգևոր հիմնարկությունների մշակութային և կրթական հաստատությունները: ՀՍԽՀ լուսավորության ժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի նույն օրվա հրամանի ուժով հաշվառման ենթարկվեցին կրթամշակութային բոլոր մասնավոր հաստատությունները՝ դպրոցները, մանկապարտեզները, գրադարանները, ընթերցասրահները, թատրոնները, կինոմատոգրաֆները, ակումբները, դպրոցական, գրական-գիտական, հրատարակչական, թատերական, երաժշտական և այլ միություններն ու ձեռնարկությունները (տպարաններ, գրախանութներ, կրպակներ): Լուծարվող «ազգայնական», «կղերական», «հակահեղափոխական» ուղղվածության մասնավոր հաստատությունների գույքը փոխանցվեց տեղական հեղկոմների լուսավորության բաժինների տնօրինմանը²:

Հաջորդիվ 1920 թ. դեկտեմբերի 31-ին լուսժողկոմը հրաման արձակեց երաժշտական գործիքների ցուցակագրման, հաշվառման և բռնագրավման մասին, որի համաձայն երաժշտական բոլոր գործիքները ցուցակագրվելու էին գավառական հեղկոմների լուսավորության բաժիններին կից ստեղծվող հանձնաժողովների կողմից: Գործիքը կարող էր բռնագրավվել «բացառապես հիմնարկությունների ու միությունների կարիքների համար»՝ բացառությամբ արհեստավարժ երաժիշտներին և երաժշտության ուսուցիչներին պատկանողներից: Երևանի գավառում երաժշտական գործիքների բռնագրավումն իրականացվելու էր միայն ժողկոմատի արվեստի բաժնի թույլտվությամբ³: 1921 թ. հունվարի 3-ին գավիհեղկոմների լուսբաժիններին ուղղված հրահանգում արվեստի բաժինն առաջարկեց անմիջապես ցուցակագրել երաժշտական գործիքները: Գործիքի տիրոջը տրվող վկայականում

2 ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I (1920 թ. նոյեմբերի 29 – 1921 թ. փետրվարի 18), Էջմիածին, Գիտական ինստիտուտի տպարան, 1921, էջ 17, Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ), ֆ. 122, ց. 1, գ. 959, թ. 37:

3 ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I, էջ 45, ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 959, թ. 13, 28:

նշվում էր, որ ցուցակագրված գործիքն առանց լուսբաժնի գիտության արգելվում է ուրիշին տալ, վաճառել կամ նվիրել⁴։ Փաստենք, որ երաժշտական արվեստի նկատմամբ պետական հսկողություն սահմանելուն միտված այս քայլերը նպատակ ունեին նաև առկա սակավաթիվ երաժշտական գործիքներն օգտագործել մշակութային հաստատությունների և մասնագետ երաժիշտների կարիքների համար։ Չպետք է զանց առնել նաև այն իրողությունը, որ պետականացման ենթակա էին ոչ պրոֆեսիոնալ, սիրողական երաժիշտների (այդ թվում՝ ազգային-ժողովրդական, հայրենասիրական երգեր կատարողների, աշուղների) գործիքները, իսկ նրանք օրենքից դուրս էին դրվում։ Խորհրդային երկրում հենց սկզբից չէր խրախուսվում, ավելին՝ մերժվում էր ազգային-հայրենասիրական երգ-երաժշտությունը։

Արվեստի բնագավառի նկատմամբ քաղաքական հսկողության հաստատումը

Խորհրդային Հայաստանում արվեստի բնագավառի նկատմամբ քաղաքական հսկողության հաստատման աշխատանքների շրջանակներում 1921 թ. հունվարի 14-ին Երևան քաղաքում հրավիրվեց Երևանի և էջմիածնի գավառների «դպրոցական աշխատավորների համագումար»։ Արվեստի դերի ու նշանակության մասին լուսժողովուհու արվեստի բաժնի վարիչ (այդ պաշտոնը ստանձնել էր 1920 թ. դեկտեմբերի 15-ին՝ փոխարինելով Դերենիկ Դեմիրձյանին⁵) Եղիշե Չարենցի զեկուցումից հետո համագումարի ընդունած բանաձևում հստակ շեշտվում էր հանրապետության «բանվոր գյուղացիության լայն շրջաններում» արվեստը համատարած դարձնելու անհրաժեշտության մասին⁶։ Այս մղումով հունվարի 18-ին լուսժողովում Աշոտ Հովհաննիսյանը գավառային հեղկոմների լուսավորության բաժիններին հանձնարարեց ցուցակագրել հանրապետության տարածքում գտնվող թատերական բոլոր պիտույքները (կեղծամեր, դիմափոխության ներկեր, զգեստներ և այլն), որոնք կարող էին բռնագրավման ենթարկվել (բացառությամբ արհեստավարժ դերասաններին պատկանող իրերի) «պետական ժո-

4 **Չարենց Ե.**, *Երկերի ժողովածու*, հ. 6, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1967, էջ 495–496։

5 **Սուքիասյան Հ.**, Նորահայտ փաստաթղթեր Դերենիկ Դեմիրձյանի մասին, *ՊԲՀ*, 2014, N 2, էջ 193։

6 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 680, թ. 80, Չարենց Ե., *Երկերի ժողովածու*, հ. 6, էջ 523։

ղովրդական թատերա-գեղարվեստական հիմնարկությունների անհրաժեշտ կարիքների համար»: Երևանում բռնագրավումները թույլատրում էր լուսժողկոմատի արվեստի բաժինը, գավառներում՝ գավիեդկոմների լուսբաժինները: Արվեստի բաժնի խնդիրն էր բռնագրավված կրթամշակութային պարագաները կենտրոնացնել՝ հանրապետության հիմնարկություններին բաշխելու նպատակով⁷:

Նշյալ աշխատանքների շրջանակներում լուսավորության ժողկոմատը ձեռնամուխ եղավ նաև թատերական խաղացանկի հստակեցմանը: Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող առաջին շաբաթներին թատերական խումբ-խմբակների խաղացանկը նախկինի համեմատ էական փոփոխության չէր ենթարկվել: Այսպես՝ 1920 թ. դեկտեմբեր – 1921 թ. փետրվարին Գեղարվեստի աշխատողների միության (Գեղարմ)⁸ դրամատիկական խմբի խաղացանկում ընդգրկված 31 դրամաների թվում էին Ավետիս Ահարոնյանի «Արցունքի հովիտը», «Ուխտվածներ», Լեոյի «Մելիքի աղջիկը», Շիրվանզադեի «Նամուս», «Ավերակների վրա», «Պատվի համար», Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ», Նիկողայոս Ալիխանյանի «Երվանդ երկրորդ», Վահան Տիրացյանի «Մեծն Վարդան», Սարգիս Գնունու «Շուշանիկ» ստեղծագործությունները⁹: Հատկապես ուշադրության է արժանի խաղացանկում դաշնակցական ականավոր գործիչ Ա. Ահարոնյանի ստեղծագործությունների առկայությունը: Նրա գործերը հետագայում Հայգլավիտի կողմից «պարտադիր կարգով» ներառվելու էին արգելված ստեղծագործությունների ցանկերում:

1921 թ. փետրվարի սկզբին ծրագրվում էր Արվեստի բաժնին կից թատերական խաղացանկ (ռեպերտուար) մշակող հանձնաժողով կազմակերպել՝ այդտեղ ընդգրկելով Գեղարմի, Կարմիր բանակի քաղաքական վարչության, Երևանի գավիեդկոմի և հանրապետության արհմիությունների խորհրդի լուսավորության բաժինների ներկայա-

7 ՀՍԽՀ դեկրետների և հրամանների ժողովածու, պրակ I, էջ 82–83, ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 959, թ. 26, գ. 369, թ. 22 և շրջ.:

8 Կազմակերպվել էր 1920 թ. դեկտեմբերի 2-ին Երևանում գումարված գեղարվեստի աշխատողների առաջին համագումարի կողմից՝ դրամատիկական, երաժշտական և նկարչական բաժիններով: 1921 թ. փետրվարյան իշխանափոխությունից հետո այն կազմալուծվեց (ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 47, թ. 10–11):

9 ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 47, թ. 14 և շրջ.:

ցուցիչներին: Այդ նպատակով բաժինը ձեռնամուխ եղավ հայերենով ու հանրապետության ազգային փոքրամասնությունների լեզուներով «հեղափոխական» բնույթի ստեղծագործությունների հավաքագրմանը՝ արվեստագետներին հատկացնելու նպատակով¹⁰: Սակայն 1921 թ. փետրվարյան ապստամբության պատճառով այս պլաններն առժամանակ (մինչև 1921 թ. ապրիլը) հետաձգվեցին: Ի դեպ, ապստամբների կազմակերպած իշխանության ժամանակավոր մարմինը՝ Հայրենիքի փրկության կոմիտեն, շարունակեց թատերական և երաժշտական միջոցառումները վերահսկողության տակ վերցնելու գործուն քայլեր կատարել՝ այս դեպքում հակախորհրդային գաղափարաքարոզչական պայքարին ծառայեցնելու նպատակով¹¹:

Քաղլուսզիսվարչության կազմակերպումը

Խորհրդայնացումից հետո պետության կողմից չափահաս բնակչության շրջանում իրականացվող կրթամշակութային աշխատանքները, որոնց նպատակը «կոմունիստական սկզբունքներով» վերջինների դաստիարակությունն էր, հայտնի է իբրև քաղաքական լուսավորություն: Այն ներառում էր գրադարանների, ընթերցարանների (այդ թվում՝ գյուղական խրճիթ-ընթերցարանների), լիկկայանների ու մեծահասակների դպրոցների (անգրագիտության վերացման նպատակով), թատրոնի, կինոյի, մամուլի ընձեռած հնարավորությունների օգտագործմամբ իրականացվող գաղափարաքաղաքական ու քարոզչական աշխատանքները¹²:

Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող շաբաթներին հանրապետությունում քաղաքական լուսավորությամբ հիմնականում զբաղվում էր ՀՍԽՀ Կարմիր բանակի քաղաքական վարչությունը: ՀԿ(Բ)Կ կենտկոմի կազմբյուրոյի 1921 թ. հունվարի 28-ի նիստում կոմունիստ Հայկ Գյուլիքնիսյանը նշանակվեց ռուսալեզու «Կոմունիստ»-ի խմբագիր և միաժամանակ լուսժողկոմատի արտադպրոցական բաժնի վարիչ¹³:

10 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 679, թ. 8, 15, 16, Չարենց Ե., Երկերի ժողովածու, հ. 6, էջ 502–503:

11 Այս թեմային կանդրադառնանք առանձին հոդվածով:

12 Խորհրդային Հայաստան, հինգ տարի. 1920–1925, Երևան, Հրատ. ՀՍԽՀ կենտգործկոմի և ժողկոմխորհի, 1926, էջ 308–309:

13 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 20, թ. 5:

Սակայն փետրվարյան ապստամբության պատճառով նա չհասցրեց արտադպրոցական աշխատանքներով զբաղվել: Ապստամբության պարտությունից հետո լուսժողկոմ Ա. Հովհաննիսյանի 1921 թ. ապրիլի 12-ի հրամանով ապրիլի 8-ից ժողկոմատի արտադպրոցական բաժնի վարիչ նշանակվեց նույնպես կոմունիստ Հայկ Յաղուբյանը¹⁴: Այնուհետև նպատակահարմար համարվեց բաժնի լիազորություններն ընդլայնել և քաղաքական լուսավորության վարչություն կազմակերպել: Մայիսի 21-ին ՀԿ(բ)Կ կենտկոմի քարտուղարությունն ազիտացիոն բաժնին հանձնարարեց ՀՍԽՀ լուսավորության ժողկոմատին կից կազմակերպել քաղաքական լուսավորության բաժին և ղեկավարել նրա աշխատանքները: Արդեն մայիսի վերջերին Հ. Յաղուբյանի ղեկավարությամբ լուսժողկոմատի կազմում սկսեց գործել քաղաքական լուսավորության գլխավոր վարչությունը (քաղլուսգլխավար)¹⁵: Այն է՝ սկզբում նախատեսված բաժնի փոխարեն նպատակահարմար համարվեց վարչություն կազմակերպել: Սեպտեմբերից գավառներում ևս քաղլուսվարական ցանց ստեղծելուն ուղղված գործուն քայլեր կատարվեցին: Քաղլուսգլխավարչության կազմակերպումից հետո վերջինին փոխանցվեցին նաև ժողկոմատի արվեստի բաժնի իրավասությունները: «Քաղլուսգլխավարչությունն այն պետական ապարատն է, որի միջոցով աշխատավոր բնակչությանը պետք է տրվի կոմունիստական դաստիարակություն, կուլտուրան ու գեղարվեստը դառնա աշխատավոր մասսաների սեփականությունը», – կարդում ենք վարչության հնգամյա գործունեության հաշվետվությունում¹⁶:

Կազմակերպմանը հաջորդող ամիսներին քաղլուսգլխավարչության լիազորություններն աստիճանաբար ընդլայնվեց: Վարչությանն էր հանձնված ազգաբնակչության շրջանում կրթամշակութային ու գաղափարադաստիարակչական աշխատանքների կատարումը, անգրագիտության վերացմանը, տեսարանային/зрелищный միջոցառումներին (թատրոն, կինո, երաժշտություն և այլն) առնչվող պարտականությունները: Սա հետագայում հանգեցնելու էր քաղաքական վերահսկողու-

14 Նույն տեղում, ց. 4, գ. 6, թ. 14 շրջ.: Դեռևս 1921 թ. փետրվարի 5-ին ՀԿ(բ)Կ կենտկոմը Հ. Յաղուբյանին ուղարկել է լուսժողկոմատի տրամադրության տակ (ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 680, թ. 110):

15 ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 44, թ. 4 շրջ., գ. 151, թ. 11:

16 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 810, թ. 3, գ. 815, թ. 35:

թյան արմատավորման ու գրաքննության հաստատման ոլորտում վարչության գործառույթների շարունակական ընդլայնմանը:

Գրաքննության հաստատման ընթացքը

Քաղաքացիավարչության կազմակերպմանը և վերջինի գործառույթների սահմանմանը զուգահեռ՝ արդեն 1921 թ. ամռանից Խորհրդային Հայաստանում մամուլը սկսեց ռազմական գրաքննության ենթարկվել: Հայաստանի Հանրապետությունից շարունակվող ավանդույթի համաձայն և Խորհրդային Ռուսաստանի օրինակով՝ այդ գործառույթը վերապահված էր ռազմական գործերի ժողկոմատին¹⁷:

Ի դեպ, 1918 թ. վերջերից Ռուսաստանի Սոցիալիստական Դաշնային Խորհրդային Հանրապետությունում (ՌՍԴԽՀ) մամուլի նախնական ռազմական գրաքննությունն իրականացնում էր Հեղափոխական ռազմական խորհրդի կազմում կազմակերպված ռազմագրաքննական բաժինը՝ պետական և ռազմական գաղտնիքի պահպանման նպատակով: 1918 թ. դեկտեմբերի 23-ին հաստատված կանոնադրության համաձայն՝ վերջինի հիմնական պարտականություն սահմանվեց ռազմական գաղտնիքի պահպանումն ու ՌՍԴԽՀ-ի շահերի պաշտպանությունը¹⁸: Բնականաբար, նշյալ սկզբունքներով առաջնորդվեցին նաև Անդրկովկասի խորհրդային հանրապետությունները: 1921 թ. օգոստոսի 1-ից ՌՍԴԽՀ-ում մամուլի նախնական ռազմական գրաքննությունը փոխանցվեց Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի (չեկա) իրավասությանը: Խորհրդային ամբողջատիրական պետական կառավարման համակարգի ձևավորման գործընթացում վերջինս առանցքային դերակատարություն ուներ:

ՌՍԴԽՀ չեկայի օրինակով Հայաստանի արտակարգ հանձնաժողովը (Հայչեկա) ևս ձեռնամուխ եղավ ռազմական գրաքննության բաժնի կազմակերպմանը: Այդ հարցում ամենալուրջ խոչընդոտը ձեռնհաս,

17 **Սուրիասյան Հ. Կ.**, Մամուլի ռազմական գրաքննության սկզբնավորումը Խորհրդային Հայաստանում, *Լրաբեր հասարակական գիտությունների*, 2016, հ. 3, էջ 56-57:

18 *История советской политической цензуры. Документы и комментарии*, Москва, Росспэн, 1997, с. 31-32, **Давидян И.**, Военная цензура в России в годы гражданской войны, 1918-1920 гг., *Cahiers du monde russe: Russie, Empire russe, Union soviétique, États indépendants*, vol. 38, N 1-2, janvier-juin 1997, с. 119.

փորձառու աշխատակիցների պակասն էր, ուստի 1921 թ. հոկտեմբերի 1-ին ՀԿ(բ)Կ Երևանի կոմիտեին ուղղված «հույժ գաղտնի» գրությամբ ՀՄԽՀ արտակարգ հանձնաժողովը, պատճառաբանելով աշխատակիցների պակասը, խնդրում էր իր տրամադրության տակ դնել երկու-երեք «վստահելի ընկերոջ»՝ ռազմական գրաքննության բաժնում աշխատելու համար¹⁹։ Սակայն այս պահանջը հնարավոր չեղավ բավարարել, ուստի ռազմժողկոմատն առժամանակ շարունակեց մանուկ նկատմամբ նախնական ռազմական գրաքննություն իրականացնել։

Եթե մանուկի նախնական ռազմական գրաքննությունն իրականացնում էր ռազմժողկոմատը, ապա Հայլեկային վերապահված էր տեսարանային միջոցառումների հսկողությունն ու գրաքննությունը։ Այսպես՝ 1921 թ. դեկտեմբերի 22-ին Հայաստանի արտակարգ հանձնաժողովի քարտուղարին ուղղված զեկուցագրում չեկայի աշխատակից Ա. Սենյոնովը հաղորդում էր, որ Երևանի Ցարսկայա փողոցում գտնվող ամերիկյան որբանոցների երեխաները «ղաշնակցական երգեր» են երգում, ինչպես Հայաստանի Հանրապետության օրհներգ «Մեր հայրենիքը», «Ջեյթուն-ցիներ» ժողովրդական երգը և այլն։ Ուշադրություն հրավիրելով որբերի՝ «խմբապետական-ղաշնակցական ոգով դաստիարակության» անթույլատրելիություն վրա՝ խնդրում էր միջոցներ ձեռք առնել այդ երևույթին վերջ տալու նպատակով²⁰։ Խնդիրն այն է, որ խորհրդային իշխանությունները մերժողական, անհանդուրժող, նույնիսկ բացահայտ ծաղրի հասնող վերաբերմունք ունեին հայկական ազգային-հայրենասիրական երգ-երաժշտության, առավել ևս Հայաստանի Հանրապետությունը կամ նախկինում իշխած Հ. Յ. Դաշնակցություն կուսակցության գործունեությունը հիշեցնող երաժշտական ստեղծագործությունների նկատմամբ։

Իր աշխատանքի ընթացքում Հայլեկան համագործակցում էր լուսժողկոմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության հետ։ Այսպես՝ 1922 թ. ապրիլի 28-ին պետական թատրոնի, կինոթատրոնների վարիչներին, ժողտնտխորհի ծառայողների կոլեկտիվին, ՀԱՄԽ-ի մշակույթի բաժնին ուղղված հրահանգում ՀՄԽՀ քաղլուսգլխվարչության նախագահ Հ. Յաղոբյանը տեղեկացրեց, որ ցանկացած պիեսի, հատվածի, քառատողի, հանկարծաստեղծման (ինպրովիզացիա),

19 ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, գ. 142, թ. 102։

20 **Ղազախեցյան Վ.**, Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, *Բանբեր Հայաստանի արխիվների*, 2011, հ. 1, էջ 68։

ռոմանսի, կինոֆիլմի և այլնի ներկայացումից կամ ցուցադրությունից առաջ պետք է նախապես ստանան Հայչեկայի ռազմաքաղաքական գրաքննության բաժնի թույլտվությունը՝ համապատասխան մակագրությամբ: Այս դեպքում նույնիսկ նշանակություն չունեն տվյալ ստեղծագործության՝ մինչ այդ քաղուսզլիվարչության խաղացանկային (ռեպերտուարային) կամ գեղարվեստական հանձնաժողովներից ստացած թույլտվությունը: Կարգադրությունը չկատարողներին սպառնում էր չեկայի կողմից «խիստ պատասխանատվության ենթարկվելու» հեռանկարը²¹: Այդուհանդերձ, 1922 թ. առաջին կեսին թատերական ներկայացումների, համերգների տպագրված ծրագրերի վրա թույլտվության համար ամսաթիվ և տպարանի անուն նշելը պարտադիր չի եղել²²:

Փաստորեն, 1922 թ. գարնանը Խորհրդային Հայաստանում գրաքննական գործառույթը փաստացի բաշխված էր երեք հաստատությունների՝ ռազմական գործերի ժողկոմատի, արտակարգ հանձնաժողովի և լուսժողկոմատի քաղաքական լուսավորության գլխավոր վարչության միջև: Վերջինի գործառույթների շրջանակներում էր միջոցառումների թույլտվությունը և հետգրաքննական լիազորությունը: Այսպես՝ 1922 թ. մայիսի 12-ին քաղուսզլիվարչության կողմից ոմն կոմունիստ Մեկկինին տրված վկայականում նշվում էր, որ նա իրավունք է ստանում ստուգելու Երևանում հրատարակվող բոլոր թերթերը²³:

Տեսարանային միջոցառումների նախնական գրաքննությունը Հայչեկային վերապահված լինելու պայմաններում ևս ռազմական գործերի ժողկոմատը մի կողմ չէր քաշվել: Ասվածի հաստատումն է կատարվող միջոցառումների նկատմամբ հսկողություն ունենալու և ռազմական գաղտնիքի պահպանմանը հետևելու նրա փորձերը, որը տեղի էր ունենում Քաղուսզլիվարչության հետ համագործակցությամբ: Այսպես՝ հիմք ընդունելով 1922 թ. մայիսի 30-ին ռազմժողկոմատի կողմից Գեղամ Աղաջանյանին տրված մանդատը, քաղուսզլիվարչությունը հունիսի 1-ին նրան թույլատրեց հսկողության նպատակով անվճար հաճախել ցանկացած տեսակի ներկայացման, համերգի, հանրային դասախոսության, կինոյի, կրկեսի և այլ տեսարանային միջոցառումների²⁴:

21 ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 125, թ. 102:

22 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 691, թ. 20-28:

23 ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 140, թ. 9:

24 Նույն տեղում, թ. 13:

1922 թ. մարտին Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի խորհրդային հանրապետությունների միավորմամբ ստեղծվեց Անդրկովկասի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունների Դաշնային Միությունը (ԱՍՄՀԴՄ): Այն նախատեսում էր հանրապետությունների պետականությունն արտահայտող կառավարման որոշ մարմինների (արտաքին գործերի, արտաքին առևտրի, ֆինանսների, աշխատանքի, բանցյուղտեսչության ժողկոմատների) լուծարում²⁵: Էականորեն սահմանափակվեց ՀՍԽՀ ռազմժողկոմատի գործունեության շրջանակները²⁶: Այս պայմաններում ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղարության 1922 թ. հունիսի 22-ի նիստում քննարկվեց ռազմական գրաքննությունը Հայ-չեկայի մարմիններում կենտրոնացնելու հարցը: Որոշվեց ռազմական գրաքննության լիազորությունը ռազմժողկոմատից փոխանցել ՀՍԽՀ արտակարգ հանձնաժողովին՝ առաջարկելով գրաքննական բաժանմունքի պետ նշանակել գրականությանը ծանոթ մարդու²⁷: Փաստորեն, Հայկոմկուսի սույն որոշումից հետո հանրապետությունում գրաքննական գործառույթներ իրականացնող մարմիններ մնացին միայն Հայ-չեկան և քաղլուսգլխավարչությունը:

Խորհրդային Հայաստանում գրաքննական համակարգի ձևավորման գործում առանցքային դերակատարություն ունեցավ 1922 թ. հուլիսի 20-ին քաղլուսգլխավար նշանակված Դանիել Դզնունին²⁸: Արդեն 1922 թ. հուլիսի 28-ին Երևանի գավառի միլիցիապետին ուղղված գրությու-

25 **Խաչատրյան Կ. Հ.**, *Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թվականներին*, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ին-տ, 2007, էջ 163–164, **Սահակյան Ա. Լ.**, *Հայաստանը Անդրկովկասյան Դաշնության կազմում (խանդավառ միավորումից մինչև անաղմուկ բաժանում)*, Վանաձոր, ՄԻՄ տպագրատուն, 2013, էջ 61–63:

26 ՀՍԽՀ կենտրոնական գործադիր կոմիտեի 1922 թ. հոկտեմբերի 17-ի որոշմամբ հանրապետության ռազմժողկոմ նշանակվեց անվանի զինվորական Հայկ Բժշկյանցը (Գայր): ԽՍՀՄ կազմավորման գործընթացի պայմաններում Անդրդաշնության միութենական խորհրդի 1922 թ. նոյեմբերի 22-ի որոշմամբ և դաշնության ռազմաժողովային գործերի ժողկոմատի նոյեմբերի 23-ի հրամանի հիման վրա ՀՍԽՀ ռազմժողկոմատը վերանվանվեց զինվորական կոմիսարիատի (*Բանբեր Հայաստանի արխիվների*, 1971, հ. 2, էջ 214–215, 230, **Հարությունյան Կ. Ա.**, *Հայկական ազգային գորամիավորումները 1918–1945 թթ.*, Երևան, Զանգակ–97, 2002, էջ 129):

27 ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 7, թ. 32 շրջ.:

28 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 690, թ. 217:

նում նա հիշեցնում էր, որ ներկայացումների, համերգների, երեկոյթների, դասախոսությունների, հանդեսների կատարմանը ձեռնամուխ լինելուց առաջ կազմակերպիչները նախապես պետք է քաղյուսզիվարից թույլտվություն ստանան²⁹:

Խորհրդային Ռուսաստանի ժողկոմխորհի 1922 թ. հունիսի 6-ի դեկրետով լուսավորության ժողկոմատի կազմում Գրականության և հրատարակչական գործերի գլխավոր վարչության (Գլավլիտ) հիմնումից հետո խորհրդային մյուս հանրապետություններում ևս գործուն քայլեր կատարվեցին գրաքննական աշխատանքը կենտրոնացնելու ուղղությամբ: Խորհրդային Հայաստանում տեսարանային միջոցառումների և տպագրական գրաքննության գործառույթը Հայչեկայից աստիճանաբար փոխանցվեց քաղյուսզիվարչությանը: Արդեն սեպտեմբերի 16-ից հանրապետությունում տեսարանային հաստատությունները (թատրոն, կինո, ակումբ, համերգասրահ և այլն) և դրանց նկատմամբ գրաքննական հսկողությունը վերապահվեց քաղյուսզիվարչությանը: Հայչեկայի նախագահ Շավարշ Ամիրխանյանը հատուկ գրությամբ այդ մասին տեղեկացրեց քաղյուսզիվար Դ. Դզնունուն՝ զգուշացնելով, որ այն վերջինի անձնական պատասխանատվության ներքո է լինելու³⁰: Արդեն 1922 թ. սեպտեմբերի 26-ին ՀԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղարության նիստում Դ. Դզնունու զեկուցումից հետո որոշվեց կազմակերպական տեսակետից Քաղյուսզիվարչությունը թողնել լուսավորության ժողկոմատի կազմում, իսկ գաղափարական առումով ենթարկել Կենտկոմի ազդեցությանը՝ բաժնին³¹: Այն է՝ վերջնականորեն ամրագրվեց քաղյուսզիվարչության կրկնակի ենթակայությունը (լուսժողկոմատ և կուսկենտկոմ):

Վերադաս մարմինների համար պատրաստված քաղյուսզիվարչության 1922 թ. սեպտեմբեր-նոյեմբեր ամիսների գործունեության հաշվետվության մեջ Դ. Դզնունին գրում է. «Չունենալով հատուկ շտատ, այնուամենայնիվ Գլխաղյուսզվարը հիշած աշխատակիցների միջոցով գրաքննության է ենթարկում տպարանների բոլոր հրատարակություն-

29 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 687, թ. 10:

30 «Խորհրդային Հայաստան», Երևան, 4 հոկտեմբերի 1922, N 223, ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 685, թ. 94:

31 ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 7, թ. 41, ֆ. 122, ց. 1, գ. 685, թ. 67:

ները, կինոյի ժապավենները, ներկայացումները և այլն՝ աշխատելով թողնել միայն այն, ինչ թույլատրելի է քաղաքական տեսակետից և գեղարվեստական է»³²։ Սա Խորհրդային Հայաստանում քաղաքական գրաքննության իրականացման մասին մեզ հայտնի առաջին ուղղակի վկայությունն է։

1922 թ. աշնանից քաղուսզվարչությունն սկսեց ինքնուրույն տնօրինել տեսարանային միջոցառումները՝ թույլատրելիս մանրամասն քննության ենթարկելով ներկայացման խաղացանկը և ծրագիրը։ Այսպես՝ 1922 թ. հոկտեմբերի 12-ին վարչությունը ՀՍԽՀ պատկոմական կազմակերպության կենտրոնական շտաբին թույլատրեց ամսի 15-ին Կարմիրբանակայինների ակումբում բեմադրել «Ծաղիկների թագուհին» մանկական պիեսը³³։ Քաղուսզվարչության կողմից գրաքննված համերգային ծրագրերի տպագրված օրինակների վրա նշված է վարչության թույլտվության, ամսաթվի և տպարանի անունը։ Այսպես՝ 1922 թ. դեկտեմբերի 2-ին ՀՍԽՀ պետական թատրոնում կայանալիք աշակերտական համերգի ծրագիրը վարչությունը թույլատրել էր նախորդ օրը։ «Թ. Գ. Լ., 1.XII.1922 թ., Առաջ. Խոր. տպարան», – կարդում ենք ծրագրի ստորին հատվածում³⁴։

Իր ամենօրյա գործունեության ընթացքում քաղուսզվարչությունը համագործակցում էր ՀԿ(բ)Կ կենտկոմի ազիտացիոն-պրոպագանդիստական բաժնի հետ և ցուցումներ ստանում նրանից, նաև անհրաժեշտության դեպքում համագործակցում Հայչեկայի ու միլիցիայի հետ։ Այսպես՝ ՀԿ(բ)Կ կենտկոմի ազիտբաժվար Ալեքսանդր Շահսուվարյանից համաձայնություն ստանալուց հետո միայն վարչությունը Արևմտահայերի բյուրոյին թույլատրեց 1923 թ. փետրվարի 11-ին Երևան քաղաքում միտինգ կազմակերպել։ Թույլտվության հրահանգ տալով հանդերձ՝ Ա. Շահսուվարյանն անհրաժեշտ էր համարել, որպեսզի վարչությունը «հսկի միտինգը», որի տեխնիկական հնարավորությունը վերջինը չունեն։ Քաղուսզվարչության ղեկավարությունն

32 ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, գ. 139, թ. 36 շրջ.։ Ի դեպ, հաշվետվության՝ «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում տպագրված տարբերակում գրաքննությանը նվիրված բաժինը բացակայում է («Խորհրդային Հայաստան», 8 դեկտեմբերի 1922, N 273)։ Այն է՝ խուսափում էին բացահայտ գրել խորհրդային պետությունում գրաքննության առկայության մասին։

33 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 685, թ. 112։

34 Նույն տեղում, գ. 691, թ. 30։

այդ մասին նախապես տեղեկացրեց Կենտկոմի ազիտբաժնավարին³⁵:

Երբեմն էլ Քաղլուսգլխավարչությունն արգելում էր այս կամ այն ներկայացման բեմադրությունը, կինոնկարների ցուցադրումը, երաժշտական ստեղծագործությունների կատարումները: Այսպես՝ 1922 թ. հոկտեմբերի 7-ին վարչության նախագահի և կազմբաժնի վարիչի կողմից Երևանի հրամանատարական կուրսերի զինկոմին ուղղված գրությունում նշվում էր, որ վարչությունը չի թույլատրում «Վարձու ամուսին», «Էս էլ քի մուցիքլուտին» և «Քաչալ Կարապետը» պիեսների բեմադրությունը: Դա պատճառաբանվում էր վերջինների անորակ («խալտուրա») լինելով³⁶: Կամ էլ, ինչպես «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի 1922 թ. հոկտեմբերի համարներից մեկում է նշված, Դ. Դզնունին «անողորմ ցենզուրայի» էր ենթարկում երգիչ և խմբավար Շարա Տալանի «արևելյան օպերաները»³⁷: Ի դեպ, բեմադրվող ներկայացումների նկատմամբ առավել խիստ մոտեցում դրսևորելու և թեթև ժանրի, «խալտուրային» բնորոշումը ստացած ներկայացումների դեպքում առավել հանդուրժող լինելու քննադատություններին ի պատասխան նույն Դզնունին տեսակետ էր հայտնում, թե երգչին կամ դերասանին պետք է գնահատի ոչ թե քաղլուսգլխավարչությունը, այլ հասարակությունը, մամուլը և Գեղաշխր³⁸:

Վարչության լիազորության շրջանակում էր նաև մասնավոր կրթօջախների գործունեության թույլտվությունը: 1923 թ. փետրվարին քաղլուսգլխավարչությունը մերժեց պարուսույց Սուրեն Մխիթարյանի դիմումը՝ պարի մասնավոր դպրոց բացելու մասին: Իբրև պատճառաբանություն նշվում էր, որ ունեցած տեղեկությունների համաձայն դպրոցն «իր կոչման բարձրության» վրա չի գտնվում³⁹: Մինչ այդ մասնավոր կրթական հաստատությունների գործունեությունն արտոնում էր լուսավորության ժողկոմատը: Այսպես՝ 1921 թ. հունիսի 27-ին ժողկոմատը Աշոտ Մելիք-Թանգյանին թույլատրել էր Երևանում պարերի և պլաստիկայի դպրոց հիմնել: Նրա առջև միայն պահանջ էր դրվել դպրոցի գործունեության վերաբերյալ պարբերաբար տեղեկություններ հաղորդել ժողկոմատին⁴⁰:

35 ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 212, թ. 12:

36 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 687, թ. 107-108:

37 «Խորհրդային Հայաստան», 7 հոկտեմբերի 1922, N 226:

38 «Խորհրդային Հայաստան», 6 հոկտեմբերի 1922, N 225:

39 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 706, թ. 176:

40 Նույն տեղում, գ. 34, թ. 27:

1920-ականների սկզբներին պատահում էին նաև գրաքննությունը շրջանցելու, հաշվի չառնելու դեպքեր: Այսպես՝ 1922 թ. նոյեմբերի 6-ին Պոլիգրաֆբաժնի վարիչին ուղղված գրությամբ Քաղլուսգլխվարչությունը պահանջում էր հայտնել, թե ում թույլտվությամբ են տպագրել Կարմիր խաչի նախորդ օրվա երեկոյթի պաստառը, քանի որ «այդ մասին Գլխքաղլուսվարի գրաքննական բաժնին ոչինչ հայտնի չէ»⁴¹: Կամ՝ 1922 թ. նոյեմբերի 30-ին ՀՄԽՀ արտակարգ հանձնաժողովին ուղղված գրությամբ քաղլուսգլխվարչությունը տեղեկացնում էր, որ, հաշվի չառնելով իրենց արգելքը (վարչության հրահանգիչը նախապես ուսումնասիրել էր ժապավենը և արգելել դրա ցուցադրությունը), «Աստղ» կինոթատրոնը ցուցադրել էր «Օռլանի կույսը» կինոնկարը՝ նվիրված ժաննա դ'Արկի գործունեությանը⁴²: Ընդգծենք, որ խորհրդային իշխանությունը հատուկ վերաբերմունք ուներ կինոյի նկատմամբ: Արվեստի այս ճյուղը համարվում էր ժողովրդական լայն զանգվածների շրջանում գաղափարական ներգործության չափազանց արդյունավետ միջոց: ՀՄԽՀ ժողկոմխորհի 1922 թ. սեպտեմբերի 29-ի որոշմամբ հանրապետության սահմաններում կինոն պետականացվեց և հանձնվեց լուսավորության ժողկոմատին: Բռնագրավվեց Երևանի «Ապոլլո» կինոթատրոնի շենքն ու ամբողջ շարժական գույքը և հատկացվեց Հայաստանի արհեստակցական միությունների խորհրդին (ՀԱՄԽ)՝ վերջինի Բանվորական կենտրոնական ակումբի կարիքների համար օգտագործելու նպատակով⁴³: Կինոյի գործը լուսժողկոմատը հանձնեց քաղլուսգլխվարչության իրավասությանը, որը և սկըզբում կինոժապավենների գրաքննությանը զուգահեռ կանոնակարգում էր նաև կինոցուցադրությունները: Գրաքննությունը շրջանցելու դեպքերը բացառելու նպատակով դեկտեմբերի 22-ին քաղլուսգլխվարչությունը լուսժողկոմատի ակադգեմիական կենտրոնին տեղեկացրեց, որ բեմադրությունից առաջ յուրաքանչյուր նոր պիես պետք է նախապես ստանա վարչության թույլտվությունը⁴⁴: Այսպիսով, չնայած գործադրվող ջանքերին՝ երբեմն գրաքննությունը շրջանցելու փաստեր էին արձանագրվում:

Ի դեպ, գավառներում ներկայացումները թույլատրում էին գավառալուսվարները՝ այդ գործառույթն իրականացնելու համար հաճախ բա-

41 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 690, թ. 41:

42 Նույն տեղում, թ. 76 և շրջ.:

43 ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 69, թ. 27:

44 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 690, թ. 89:

վարար տեղեկատվություն չունենալով: Հայաստանի խորհրդայնացմանը հաջորդող առաջին ամիսներին կապը թույլ էր նույնիսկ մոտակա շրջանների հետ: 1922 թ. հունվարի 14-ին Աշտարակի քաղուսբաժնի վարիչն իր վերադասին՝ Էջմիածնի գավառալուսբաժնի վարիչին հասցեագրած հեռագրում խնդրում էր շտապ տեղեկացնել, թե «ինչպիսի օպերետկաներ և դրամաներ չի թույլատրվում խաղալ»⁴⁵: Երաժշտագետ Սպիրիդոն Մելիքյանը 1922 թ. մարտի 24-ին Էջմիածնի գավառի լուսբաժնի վարիչին ուղղված դիմումում խնդրում էր թույլ տալ հաջորդ օրը՝ մարտի 25-ին, Վեհարանի նոր շենքում (այն պետականացվել էր) «խմբական համերգ կազմակերպել»: Ս. Մելիքյանի դիմումին դրական ընթացք է տրվել⁴⁶: Կամ՝ 1923 թ. փետրվարի 1-ին Էջմիածնի գավառալուսբառ Արամայիս Բունիաթյանը Վաղարշապատի նորաստեղծ դրամատիկական-օպերետային խմբին թույլատրեց նույն օրը (հինգշաբթի) բեմադրել «Մոլլա Նասրեդին» օպերետը և «Վերջին հառաչանք» պիեսը⁴⁷:

Գրաքննական գործառույթի իրականացումը, տեսարանային միջոցառումներ կազմակերպելու հարցով ստացվող շարունակական դիմումները բավարարելը կամ մերժելն աշխատատար, նկատելի ռեսուրսներ և մտավոր ունակություններ պահանջող աշխատանք էր: Սա այն դեպքում, երբ 1922 թ. նոյեմբերին Քաղուսգլխավարչության աշխատակիցների թիվն ընդամենը 12 էր, որոնք ծանրաբեռնված էին նաև այլ աշխատանքներով⁴⁸: Երկրորդական չէ նաև այն հանգամանքը, որ ցածր էր վարչության աշխատակիցների վարձատրությունը: Ուստի մեծ մասամբ ներկայացումների հաշվառում էր կատարվում (առավելապես անկանոն կերպով): 1922 թ. երկրորդ կեսին քաղուսգլխավարչության կողմից տրված ներկայացումների թույլտվությունները համարակալված չեն⁴⁹: Թույլտվությունների կամ մերժումների համարակալումը սկսվել է 1923 թ. հունվարից: Թիվ 1 թույլտվությունը հունվարի 3-ին տվել է Դ. Դզնունին: Այն գեղարվեստական երեկույթ էր, որը կայանալու էր նույն օրը պետական թատրոնի սրահում⁵⁰: Ի պաշտոնե Դ. Դզնունին հանրա-

45 ՀԱԱ, ֆ. 134, ց. 1, գ. 688, թ. 4:

46 Նույն տեղում, թ. 23:

47 Նույն տեղում, գ. 733, թ. 34:

48 ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, գ. 690, թ. 217:

49 Նույն տեղում, գ. 701:

50 Նույն տեղում, գ. 713, թ. 2:

պետության թիվ մեկ գրաքննիչն էր: 1922 թ. սեպտեմբերից (տեսարանային գրաքննությունը վարչությանն անցնելուց) մինչև 1923 թ. հունիսը (Հայգլավիտի կազմակերպումը) ներկայացումների թույլտվություն տալիս էր նա և վարչության աշխատակիցները՝ հիմնականում կազմբաժնի հրահանգիչ Բաղդասար Աստունին և հրահանգիչ Դանիել Դանիելյանը: Այն է՝ գրաքննական թույլտվությունը վարչության որևէ աշխատակցի ուղղակի պարտականությունը չէր: Այսպես՝ նույն օրը (օրինակ՝ 1923 թ. ապրիլի 14-ին) մեկ ներկայացման (N 65) թույլտվությունը տվել է Դ. Դանիելյանը, իսկ մեկ ուրիշինը (N 66)՝ Բ. Աստունին⁵¹:

1923 թ. հունվարից Քաղլուսզիսվարչությունն ուներ 4 բաժին՝ իրենց ենթաբաժիններով: Գրաքննական գործառույթը վերապահված էր ազիտացիոն-պրոպագանդիստական բաժնի գեղարվեստական-դեկորային ենթաբաժնին: Խորհրդային Հայաստանում քաղաքական վերահսկողության և գրաքննության արմատավորման պայմաններում 1923 թ. մայիսին վարչությունը կառուցվածքային փոփոխության ենթարկվեց: Իսկ արդեն հունիսի 21-ին ՀՄԽՀ ժողկոմխորիը հաստատեց Գրականության, հրատարակչության և խաղացանկի հսկողության վարչության (Հայգլավիտ) կանոնադրությունը, որի համաձայն հանրապետությունում միաձուլվեց գրաքննության բնագավառում պետական-կուսակցական քաղաքականությունը: Այն Խորհրդային Ռուսաստանի Գլավիտի կանոնադրության տեղայնացված տարբերակն էր: Հայգլավիտի և նրա տեղական մարմինների պարտականությունների թվում էր դրամաների, օպերաների, համերգների, կինոյի ժապավենների և այլնի խաղացանկերը նայելը և դրանք հրապարակային ներկայացման կամ ցուցադրության թույլատրելը: Թատերական ներկայացումների, համերգների ծրագրերի, կինոնկարների ժապավենները պարտադիր ենթակա էին Հայգլավիտի կամ նրա տեղական մարմինների թույլտվությանը: Տեսարանային հաստատությունների ղեկավարները պարտավոր էին առանց շեղվելու հետևել սույն կարգին՝ հակառակ դեպքում պատասխանատվության կենթարկվելին: Իր ընթացիկ աշխատանքների ընթացքում Հայգլավիտը համագործակցում էր Արտակարգ հանձնաժողովի և Միլիցիայի գլխավոր վարչության հետ⁵²:

51 ՀԱՍ, ֆ. 122, ց. 1, գ. 690, թ. 57:

52 **Սուրիասյան Հ.**, Խորհրդային Հայաստանի գլավիտի կազմակերպումը, *Հայոց պատմության հարցեր*, թիվ 17, Երևան, 2016, էջ 241-252:

Եզրակացություն

Խորհրդային Հայաստանում գրաքննական համակարգի ձևավորման ժամանակափուլը (1920 թ. դեկտեմբերին Հայաստանի խորհրդայնացումից մինչև 1923 թ. հունիսին Հայգլավլիտի ձևավորումը) բնականաբար նաև արվեստի բնագավառի նկատմամբ գրաքննական հրսկողության հաստատման ժամանակահատված է: Խնդրի վերաբերյալ եղած արխիվային փաստաթղթերի ուսումնասիրությունից տեսնում ենք, որ կրթամշակութային հաստատությունների, արվեստի գործերի, գործիքների ու պարագաների պետականացումից հետո Խորհրդային Հայաստանի իշխանությունները քայլ առ քայլ գրաքննական հսկողություն սահմանեցին նաև արվեստի նկատմամբ: Այդուհանդերձ, նկատելի է, որ Հայգլավլիտի ստեղծման նախօրեին (նաև գործունեության առաջին շրջանում) առավելապես ներկայացումների հաշվառում էր տեղի ունենում: Նույնիսկ Հայգլավլիտի կազմակերպումից հետո մեկ աշխատակիցը, որը նաև այլ պարտականություններ ուներ, ֆիզիկապես հնարավորություն չուներ այդքան բազմաքանակ միջոցառումների դիմումները մանրամասն քննության ենթարկելու:

THE EMERGENCE OF ART CENSORSHIP IN SOVIET ARMENIA (1920–1923)

HAMO SUKIASYAN

PhD in History

Institute of History, NAS RA

State Academy of Fine Arts of Armenia

Abstract

In order to carry out an ideological, political and cultural propaganda among broad masses of the population and spread communist ideas, the authorities of the Soviet Socialist Republic of Armenia (SSRA) introduced political control in the country republic in December 1920. To this end, cultural institutions, printing houses, musical instruments, etc. were nationalized, after which, the authorities gradually started censorial control over the sphere of art. In this process, the Head Office for Political Enlightenment of the People's Commissariat for Education cooperated with the People's Commissariat of Military Affairs and the Extraordinary Commission of Armenia (Cheka). The period from December 1920 (the sovietization of Armenia) to June 1923, when the Glavlit of Armenia was established, is considered the initial phase of art censorship in Soviet Armenia. During this period, performances were mostly recorded, and some events were even banned. However in some cases, censorship was ignored.

Keywords: censorship, cinema, theater, music, art, political control, Soviet Armenia, Glavlit

ВОЗНИКНОВЕНИЕ ХУДОЖЕСТВЕННОЙ ЦЕНЗУРЫ В СОВЕТСКОЙ АРМЕНИИ (1920–1923 гг.)

АМО СУКИАСЯН

канд. историч. наук

Институт истории НАН РА

Государственная академия художеств Армении

Резюме

В целях проведения идеологической, политической и культурной пропаганды среди широких масс населения и распространения коммунистических идей власти Советской Социалистической Республики Армения (ССРА) с декабря 1920 года начали вводить в республике политический контроль. С этой целью были национализированы учреждения культуры, типографии, музыкальные инструменты и т. д. Затем власти постепенно ввели цензурный контроль над сферой искусства. В этом процессе Главполитпросвет наркомпроса ССРА сотрудничал с Наркоматом по военным делам и Чрезвычайной комиссией Армении (ЧК). Период с декабря 1920 (советизация Армении) по июнь 1923 года, когда был создан Главлит Армении, считается начальным этапом художественной цензуры в Советской Армении. В этот период выступления в основном ставились на учет, хотя были случаи, когда мероприятия запрещались и цензура не учитывалась.

Ключевые слова: цензура, кино, театр, музыка, искусство, политический контроль, Советская Армения, Главлит

Գրականության ցանկ

1. ՀԱԱ, ֆ. 1, ց. 1, զգ. 44, 142, 151:
2. ՀԱԱ, ֆ. 1, ց. 2, զգ. 7, 125, 140:
3. ՀԱԱ, ֆ. 1, ց. 3, գ. 212:
4. ՀԱԱ, ֆ. 113, ց. 3, գ. 69:
5. ՀԱԱ, ֆ. 122, ց. 1, զգ. 20, 34, 369, 679, 680, 685, 687, 690, 701, 706, 713, 810, 815, 959:
6. ՀԱԱ, ֆ. 122, ց. 4, գ. 6:
7. ՀԱԱ, ֆ. 134, ց. 1, զգ. 688, 733:
8. ՀԱԱ, ֆ. 37, ց. 1, գ. 47:
9. *Բանբեր Հայաստանի արխիվների*, հ. 2, 1971:
10. **Խաչատրյան Կ. Հ.**, *Հայ-ռուսական հարաբերությունները 1920–1922 թվականներին*, Երևան, ՀՀ ԳԱԱ պատմ. ին-տ, 2007:
11. «Խորհրդային Հայաստան», Երևան, 4, 6, 7 հոկտեմբերի, 8 դեկտեմբերի 1922, հ. 223, 225, 226, 273:
12. *Խորհրդային Հայաստան, հինգ տարի. 1920–1925*, Երևան, Հրատ. ՀՍԽՀ կենտգործկոմի և ժողկոմխորհի, 1926:
13. **Հարությունյան Կ. Ա.**, *Հայկական ազգային զորամիավորումները 1918–1945 թթ.*, Երևան, Զանգակ-97, 2002:
14. *ՀՍԽՀ ղեկընդնների և հրամանների ժողովածու, պրակ I (1920 թ. նոյեմբերի 29 – 1921 թ. փետրվարի 18)*, Էջմիածին, Գիտական ինստիտուտի տպարան, 1921:
15. **Ղազարխեցյան Վ.**, Չեկայի գործունեության առաջին տարին Հայաստանում, *Բանբեր Հայաստանի արխիվների*, հ. 1, 2011, էջ 45–67:
16. **Չարենց Ե.**, *Երկերի ժողովածու*, հ. 6, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1967:
17. **Սահակյան Ա. Լ.**, *Հայաստանը Մոդրկովկասյան Դաշնության կազմում (խանդավառ միավորումից մինչև անաղմուկ բաժանում)*, Վանաձոր, ՄԻՄ տպագրատուն, 2013:
18. **Սուրիասյան Հ. Կ.**, Մամուլի ռազմական գրաքննության սկզբնավորումը Խորհրդային Հայաստանում, *Լրաբեր հասարակական գիտությունների*, հ. 3, 2016, էջ 53–62:

19. **Սուքիասյան Հ.**, Խորհրդային Հայաստանի գլավլիտի կազմակերպումը, *Հայոց պատմության հարցեր*, հ. 17, 2016, էջ 241–252:
20. **Սուքիասյան Հ.**, Նորահայտ փաստաթղթեր Դերենիկ Դեմիրձյանի մասին, *ՊԲՀ*, հ. 2, 2014, էջ 192–199:
21. **Давидян И.**, Военная цензура в России в годы гражданской войны, 1918–1920 гг., *Cahiers du monde russe: Russie, Empire russe, Union soviétique, États indépendants*, vol. 38, N 1–2, janvier–juin 1997, p. 117–125.
22. *История советской политической цензуры. Документы и коментари*, Москва, Росспэн, 1997.

Ընդունվել է՝ 09.11.2023

Գրախոսվել է՝ 24.11.2023

Հանձնվել է տպ.՝ 12.03.2024